ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 42. Դատապարտյալին պատիժը կրելու ուղարկելը

1. Կարճաժամկետ ազատազրկումն ի կատար է ածվում եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու և այն կատարելու կարգադրությունը ստանալու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:

2. Դատավճիռը կատարելու մասին դատավորի կարգադրությունը ստանալուց, ինչպես նաև պատժի ավարտից հետո անհապաղ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալի վերաբերյալ տվյալներն ուղարկում է սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին:

Հոդված 50. Դատապարտյալին պատիժը կատարելու ուղարկելը

1. Կարգապահական գումարտակում պահելն ի կատար է ածվում եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու և այն կատարելու կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:

2. Դատավճիռը կատարելու մասին դատավորի կարգադրությունը ստանալուց, ինչպես նաև պատժի ավարտից հետո անհապաղ կարգապահական գումարտակի հրամանատարությունը դատապարտյալի վերաբերյալ տվյալներն ուղարկում է սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին:

Հոդված 60. Դատապարտյալին պատժի կատարման ուղարկելու հիմքերը և ժամկետները

1. Դատապարտյալները պատժի կատարման ուղարկվում են եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու և այն կատարելու կարգադրությունն ստանալու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան քսանօրյա ժամկետում:

Այդ ժամկետում դատապարտյալն իրավունք ունի մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ ունենալու կարճատև մեկ տեսակցություն, ինչպես նաև մեկ հեռախոսակապի կամ տեսազանգի հնարավորություն:

2. Դատավճիռը կատարելու մասին դատավորի կարգադրությունը ստանալուց, ինչպես նաև պատժի ավարտից հետո անհապաղ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դատապարտյալի վերաբերյալ տվյալներն ուղարկում է սահմանային վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնին: